

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱԻՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՋ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԷՏՆԵՐ

Վարչապետարանին մեջ, մարաթոնային, վեց ժամ-եայ նիստ է մղ ետք, Լիբանանի կառավարությունը որոշեց արաբական գերաստիճանին մասնակցության հարցը եզրակացնել, յառաջիկայ Երեքշաբթի՝ Մարտ 25-ի նախագահի ընտրության համար նախատեսուած խորհրդարանի 17-րդ նիստին լոյսին տակ:

Նիստի ընթացքին, վարչապետ Ֆուատ Սինիրա, կառավարության անդամներուն փոխանցեց Սենեկայի մեջ կայացած իսլամական գերաստիճանին մթնոլորտը, ինչպէս նաեւ պարզեց արաբական նախաձեռնութեան եւ Լիբանանի տագնապին վերաբերեալ իր ունեցած շփումներուն պատկերը:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Սուսա դիտել տուաւ, որ լիբանանեան թղթածրարին շուրջ կեցուածքները կը մնան անփոփոխ: Սուսա ըսաւ, թէ Լիբանանի կացութիւնը, առայժմ պիտի չենթարկուի որեւէ փոփոխութեան:

Իսկ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պեռ-Նար Զուլներ ըսաւ, որ շատ չնչին յոյսեր կան, Մարտ 25-ին նախագահի ընտրութիւն կայանալու ուղղութեամբ: Զուլներ յայտնեց, թէ Լիբանանի շուրջ կեցուածքները կը մնան անփոփոխ եւ ներկայիս չկան նոր տուեալներ: Ան աւելցուց, թէ հակառակ Ֆրանսայի ցանկութեան, տիրող կացութեան մէջ ոչ մէկ նախաձեռնութիւն կրնայ պատկուիլ յաջողութեամբ, անկախ ըլլայ ֆրանսական կամ ֆրանսական-երոպական:

Այս կացութեան մէջ, Իսրայէլի նախագահ՝ Շիմոն Փերեզ ըսաւ, թէ Լիբանանի հետ սահմանագիծը ներկայիս շատ աւելի վտանգաւոր դարձած է Իսրայէլի համար:

Փերեզ սպառնաց որեւէ կողմի որ փորձէ ապահովական հարց ստեղծել սահմանագիծին վրայ, ընդգծելով, որ Իսրայէլ պիտի յաջողի պարտութեան մատնել Զըզ-պալլան, եթէ այս վերջինս փորձէ մագլցումի տանիլ լարուածութիւնը:

ՃՈՍՊԼԱԹ ԱՐԱԲԱԿԱՆ ԼԻԿԱՅԷՆ ՕԺԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ ՊԱՅՄԱՆՈՒՄ

Երեսփոխան Ռալփ Ծոմալաթ դիտել տուաւ, թէ լիբանանեան այժմու տագնապը չի վերաբերիր ասկէ կարճ անկէ նախարարի մը, այլ իրականութեան մէջ կ'առնչուի Լիբանանի մէջ քաղաքական արեւելումին ու անոր ապագայի դերակատարութեան:

Իր շարաքական գրոյցին մէջ ան ուշադրութեան յանձնեց, որ «այսօր մեր տեսածը՝ Թաէֆը յեղաշրջելու փորձերը, քաղաքական ու սահմանադրական նոր կանոններ ստեղծելու ընդմէջէն, մէջ մը «մենաշնորհեալ-նախարար»-ի մէջ մը «խանգարող մէկ-երրորդ»-ի ճամբով, խոյանք մըն է հաստատութիւններու պահանջներէն վրայ, եւ գործադիր իշխանութիւնը պատանդ դարձնել շրջանային առանցքներու նպատակներուն, ներքին կարգ մը կողմերով ներկայացուցած»:

Ծոմալաթ Արաբական Լիկայէն պահանջեց «գործնականօրէն Լիբանանին աջակցիլ շօշափելի միջոցառումներու ընդմէջէն, որոնք իրեն կ'օգնեն ամրապնդելու իր անկախութիւնն ու գերիշխանութիւնը, սուրիական վարչակարգը մղելով Լիբանանի հետ դիւստապիտական յարաբերութիւններ փոխանակելու, գինք ճանջնալու իրքեւ անկախ պետութիւն, երկու երկիրներուն միջեւ սահմանագիծով կատարելու, եւ հաստատելու երկխօսութեան որոշումները, որոնք ընդունուեցան միաձայնութեամբ, որոնց առաջին շարքին կու գան միջազգային դատարանը եւ պաղեստինեան գէնըզ գաղթականներէն ներս եւ դուրս»:

Ան հաստատեց, թէ «աւելի ճիշդ պիտի ըլլայ որ Արաբական Լիկան չգրադի կառավարական կազմերու շուրջ թիւերու մանրամասնութիւններով եւ խանգարող, երաշխանորոգ ու տապալող մէկ-երրորդներով, որոնք իսկական շեղում են սուրիական վարչակարգին հետ հիմնական վեճէն ու Լիբանանի անկախութիւնը չճանջնալու քայլէն»:

Պիւս կողմէ, Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Ամին Ճեմալէ ըսաւ, թէ «շրջանը յաւելեալ ցընցումներ չի տանիր», նշելով, թէ «լիբանանեան տագնապը ժխտական հետեւանքներ պիտի ունենայ շրջանին եւ Լիբանանի վրայ»:

Արաբական խորհրդարանական պատուիրակութեան նախագահ Մուհամմատ Ճասէ Սաքըրին հետ հանդիպում մը ունենալէն ետք Ճեմալէ նշեց, թէ «կան քրիստոնէական ուժեր, որոնք չեն ըմբռնած այս պարագայութեան վտանգը»: Ան դիտել տուաւ, թէ առաջնահերթութիւնը կը մնայ երկրի նախագահի մը ընտրութեան, հակառակ առաջարկուող բոլոր նիւթերուն, այդ քայլին չկատարուիլը ծածկելու համար:

ԴԱՄԱՍԿՈՒ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻՆ ՍՈՐԻԿԱՆ ԿԱՇՏՈՒՄ

Սուրիական պաշտօնական աղբիւրներ «Յայաթ»-ին հաւաստեցին, թէ Դամասկոս իր նախապարտաստութիւնները կը շարունակէ հիւրընկալելու համար ընթացիկ ամսավերջին համար որոշուած արաբական գերաստիճանը, ի հեճուկս անոր ժամկետի մօտեցումին հետ «քաղաքական ճնշումներու մագլցում»-ին, նպատակ ունենալով անոր յաջողութիւնը կապել Լիբանանի նախագահի մը ընտրութեան, լիբանանեան խորհրդարանի 25 Մարտի նիստին:

Դամասկոսի մէջ կը յիշուի, թէ յառաջիկայ օրերը սկսած պիտի ըլլան կարգ մը քայլերու, գագաթաժողովի գումարումէն առաջ «կացութիւնը վատթարացնել»-ու նպատակով: Անոնց առաջին ցուցանիշներէն էր Երոմիութեան արտաքին հարցերու պատասխանատու Խալիէ Սուլանայի կողմէ քննադատական յայտարարութիւնները Սուրիոյ հասցէին, ինչպէս նաեւ հրաւերը «ճնշումները բարձրացնել» Դամասկոսի վրայ, գերաստիճանէն առաջ Լիբանանի նախագահ մը ընտրելու համար, անոր գզուշացումին կողքին Սուրիոյ հետ «տագնապ» մը, այդ բանը տեղի չունենալու պարագային:

Սուրիական շրջանակներ ամերիկացի փոխ նախագահ Տիք Չեյնիին շրջանի երկիրներուն մէջ շրջապտոյտը դասեցին Դամասկոսի գագաթաժողովէն առաջ «մագլցողական կեցուածք մը գոյացնել»-ու ծիրին մէջ, ինչպէս նաեւ արաբ պատասխանատուներու հետ քըն-նարկել գերաստիճանին մասնակցելու հարցը եւ անկէ բխելիք կեցուածքները:

Այդ աղբիւրները դիտել տուին, թէ թիւ 1559 որոշումի գործադրութեան գծով ՍԱԿ-ի ընդհանուր քարտուղարի պատուիրակ Թերի Ռոտ Լարսընին շրջապտոյտը նպատակ ունէր միջազգային որոշումին գործադրութիւնը «կապել» բանակի հրամանատար գոր. Միշէլ Սըլէյմանին Լիբանանի նախագահ ընտրութեան, հիմնուելով միջազգային որոշումի հիմնարկը յօդուածին վրայ, որ կը բովանդակէ «Ապահովութեան Խորհուրդին աջակցութիւնը ընտրական ազատ եւ անաչառ գործընթացի մը նախագահական յառաջիկայ ընտրութեանց գծով, որոնք կը կայանան համաձայն լիբանանեան սահմանադրութեան օրէնքներուն, պատրաստուած առանց արտաքին միջամտութեան կամ ազդեցութեան», արաբ-միջազգային համագումարի մը նախապարտաստութեան կողքին, որ ճնշումներ գինուորաբէր Դամասկոսի վրայ:

Աղբիւրները հաստատեցին, թէ Ռոտ Լարսըն «Իսրայէլի բարեկամ մըն է, որ չեզոքութեան նուագագոյն սահմանը չունի», եւ թէ «Փարիզ-3» խորհրդաժողով մը կայացնելու մասին անոր խօսքերը կը նպատակադրեն «ձեռքերը լուսի լիբանանեան տագնապի լուծման արաբական նախաձեռնութեան, ամբողջական կողովի հիման վրայ, որ կը միտի լիբանանեան համերաշխութեան իրականացումին»:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՈՆԱԿԱՎՈՒԹԵԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՂՁԳԵԼՈՒ ՄԻՏՈՒՄ

Սուրիական շրջանակներ «Յայաթ» օրաթերթին ընդմէջէն դիտել տուած են, թէ արաբական գերաստիճանը կ'օգտագործուի որպէսզի Սուրիայէն պահանջուի արաբական նախաձեռնութեան հետ կապ չունեցող բաներ գործադրել: Անոնք ակնարկած են այն խօսքերուն, որոնք կը վերաբերին բանակի հրամանատար գոր. Միշէլ Սըլէյմանին անմիջապէս նախագահ ընտրութեան դիւստապիտական ապա քննարկել ազգային միութեան կառավարութեան մը կազմութիւնը եւ ընտրական նոր օրէնքի մը որդեգրելը:

Հաւանական կը թուի, որ Զայաթի եւ Օմանի արտաքին գործոց նախարարներ շէյխ Յամատ Պըն Ճասպըր Պըն Ճասէ Ալ Թախիին եւ Եուսէֆ Պըն Ալուոիին առաջարկած գաղափարները կը բովանդակեն արաբական նախաձեռնութեան վերաբանաձեռնումը երկու կետերու հիման վրայ՝ Լիբանանի նախագահի ընտրութեան կայացումը դիւստապիտական կառավարութեան եւ ընտրական օրէնքի նիւթերու քննարկումէն առաջ, եւ կապ ղնել ընտրութեան ու գերաստիճանի յաջողութեան միջեւ:

Սուրիական շրջանակներ հաստատեցին, թէ լիբանանեան կողմերը իրենց պահանջներուն մագլցում կու տան երբ տագնապի լուծման որեւէ նոր շարժում ըլլայ, մինչ լուծումը գործակցութիւն եւ ոչ թէ տարակարծութիւն կը պարտաւորեցնէ, լուծման սատարող արաբական ճիգերու առկայութեան կողքին:

Այս միջոցին շրջան ըրին տեղեկութիւններ այն մասին, թէ ամերիկեան մղում մը կայ լիբանանեան այժմու խորհրդարանին պաշտօնավարութիւնը յառաջիկայ տարի երկարաձգելու ուղղութեամբ, փոխանակ ընտրութեանց նոր օրէնքի մը շուրջ համաձայնելու:

ԻՐԲԵՒ ԹԵ...

Լիբանանեան ապահովական աղբիւրներ «Յայաթ» օրաթերթին հաստատեցին, թէ Լիբանանի մէջ կարգ մը կողմերու եւ խմբաւորումներու բաժնած գէնքը բաւարար չէ պատերազմի *ռաւոտներ* բռնկեցնելու, եւ թէ անոր մեծ մասը կը նպատակադրէ հիմնել «սարափի հաւասարակշռութիւն» մը, որ հակադիր կողմերուն կ'արգիլէ իրենց հակառակորդներուն վրայ յարձակում նախաձեռնել:

Աղբիւրները նշեցին, թէ լիբանանեան թաղերուն մէջ վաճառուող եւ բաժնուող գէնքը չի բաւեր պատերազմ յառաջացնելու, եւ թէ գինամթերքի «երաշտ» գոյութիւն ունի եւ այս ցոյց կու տայ, որ գէնքի բանակութիւնները «առնետրական» են եւ ոչ թէ «քաղաքական»: Աղբիւրները նոյնպէս դիտել տուին, թէ եղած քանակութիւնները կ'ընդգրկեն թէթեւ գէնքեր, եւ թէ գոյութիւն չունին հրթիռային արկեր կամ միջակ ու ծանր տրամաչափերու գնդացիներ:

ՍԻՆԻՈՐԱ ԿԸ ՏԵՂԵԿԱՅՆԷ ՊԱՏՐԻԱՐԸ ԱՖԷՅՐԻՆ

Վարչապետ Ֆուատ Սինիրա մարտի պատրիարք Նարայա Պուրոս Աֆէրիին տեղեկացուց մթնոլորտն ու արդիւնքները այն հանդիպումներուն, զորս Տաքարի իսլամական գերաստիճանին առջնորդ ունեցաւ կարգ մը երկիրներու նախագահներուն եւ պատասխանատուներուն հետ, այդ երկրի մէջ լիբանանեան գաղութի անդամներուն հետ հանդիպման մթնոլորտի կողքին:

Մասնապէս, վարչապետն ու պատրիարքը քննարկեցին Լիբանանի այժմու իրավիճակը:

ԼԵՌՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԿՈՂՄԱԿԻՑՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԻՄԵՆ ԲՈՂՈՔԻ ՆՈՐ ԵՂԱՆԱԿԻ ՄԸ

Երեւանէն հասած տեղեկութեանց համաձայն, Լեւոն Տէր Պետրոսեանի կողմնակիցները կը ծրագրեն բողոքի խրաչատուկ միջոցառում մը կազմակերպել արտակարգ դրութեան վերացման յաջողութեան օրն իսկ:

Կազմակերպողները կոչ ուղղած են Հայաստանի քաղաքացիներուն մասնակցելու «լուր բողոքի շարք» միջոցառման, բողոքելու համար Մարտի 1-ին ու անոր յաջորդող օրերուն իշխանութեան կողմէ ձեռնարկուած քայլերուն դէմ:

Բողոքի միջոցառումը նախատեսուած է սկսիլ Ուրբաթ, Մարտ 21-ի կէսօրէ ետք ժամը 5:00-ին եւ պիտի տեւէ երկու ժամ:

Բողոքի շարքը պիտի երկարաձգուի Միասնիկեանի հրապարակէն մինչեւ Ազատութեան հրապարակ: Կազմակերպողները նաեւ որոշ կանոններ հրապարակած են, որոնք կը յորդորեն մասնակիցները չխանգարել երթելու կանոնները, որպէսզի չգրաւեն ոստիկանութեան ուշադրութիւնը:

Մասնակցողներուն կ'առաջարկուի նաեւ հազմիլ սեւ հագուտ եւ կապել սեւ ծապաւէն՝ ի յիշատակ Մարտ 1-ին սպանուածներուն:

Վ. ՕՍԿԱՆԵԱՆ. «ՏԱԿԱԻՆ ՇԱՏ ԲԱՆ ՈՒՆԻՆՔ ԸՆԵԼԻՔ»

Կեդրոն հեռատեսիլէն սիւռուած հարցազրոյցի մը մէջ, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ըսաւ. «Մենք ժողովրդավարութեան առումով շատ բան ըրինք, բայց տակաւին ճամբայ ունինք կարելու»:

Օսկանեան ըսաւ, որ Հայաստանի մէջ ժողովրդավարութեան խնդիրը վստահութեան պակասն է պետական հաստատութիւններու հանդէպ: Ըստ նախարարին, եթէ նոյնիսկ 20 տոկոս վստահութիւն ըլլար Կեդրոնական Ընտրական Յանձնա-

ժողովին նկատմամբ, Մարտ 1-ի դէպքերը տեղի չէին ունենար: Նախարարին կարծիքով երոպական ծրագիրները Հայաստանի մէջ պէտք է կեդրոնացան ազատ մամուլի եւ կրթութեան վրայ:

Արտաքին գործոց նախարարին գնահատմամբ, մամուլը իր անպատասխանատու աշխատանքով՝ այնպիսի ճեղքուածք ստեղծած է եւ անվստահութիւն ժողովուրդին մօտ, որ ժողովուրդը որեւէ բանի հանդէպ կրօնքոյցած է իր հաւատքը եւ ոչ մէկ բանի կը հաւատայ:

ՎԻՔՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆ. «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԻ ՔՆՆԱՐԿԵՐ ԴԺԳՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՆԵՐԸ»

Հայաստանի մէջ, Ապրիլ 9-ին, Երեւանի ժամով 2:00-ին, Օփերայի եւ Պալէի ազնիւնի ակադեմիայի շէնքին մէջ պիտի կայանայ Հայաստանի նախագահի պաշտօնի ստանձնման Ազգային Ժողովի յատուկ նիստ:

Հայաստանի խորհրդարանին մէջ յետ քուէարկութեան այս որոշումին դէմ քուէարկեց Ժառանգութիւն կուսակցութիւնը, իսկ երեսփոխան Վիքոր Դալլաքեան մնաց ձեռնպահ: 85 երեսփոխաններ կողմ քուէարկեցին:

Հայաստանի խորհրդարանին մէջ ելոյթ ունենալով, երեսփոխան Վիքոր Դալլաքեան իշխանութիւններուն կոչ ուղղած է միշտ շարժուիլ այն հաշուարկով, որ վաղը իրենք կրնան ընդդիմութիւն դառնալ: «Լեւիլի քան 350 հազար քաղաքացիներ իրենց ձայնը Լեւոն Տէր Պետրոսեանին տուած են, եւ տպաւորութիւն կայ, որ անոնց մեծ մասը ձայնը տուած է ոչ թէ նախկին նախագահին, այլ՝ դէմ քուէարկած է գործող իշխանութիւններուն, այսպիսով արտայայտելով իր բողոքը: Լեւոն Տէր Պետրոսեանը յաջողեցաւ միացնել ժողովուրդի ղեկավարները: Ուրեմն անհրաժեշտ է մտածել ոչ թէ համադրող անձին մասին, այլ՝ պարզել ղեկավարութեան պատճառները: Դժբախտաբար պատճառները չեն քննարկուած», ըսաւ Վիքոր Դալլաքեան:

ՍԱՐՄԱՆԱԳԻԾԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՅ ՄՏԱՐՈՒՉ

«Լեւոնային Դարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդեց, թէ Ատրպէյճան կը շարունակէ խախտել Դարաբաղ-ատրպէյճանական շփման գիծի վրայ հաստատուած զինադադարը:

Պաշտպանութեան նախարարութեան բանքերը անցնոց, թէ հակառակ ազդեցիկական կողմէն եկած կրակոցներուն, սահմանագիծներուն վրայ իրավիճակը կայուն է եւ Լեւոնային Դարաբաղի պաշտպանութեան բանակի ամբողջական վերահսկողութեան տակ է:

Սակայն, Ատրպէյճան չի դադարի ռազմաշունչ սպառնալիքներէն: Արդարեւ, պաշտպանութեան նախարար Մաֆար Ալիեւ ըսաւ, թէ Ատրպէյճան պատրաստ է վերադարձնել իր տարածքները՝ ուժային ճանապարհով:

Ատրպէյճանի ռազմական պիտուէն գգափորէն ճանձ է, եւ Ալիեւի խօսքերով, Ատրպէյճան պատրաստ է «ետ նուաճել իր տարածքները, որոնք կը գտնուին հայկական գործերուն հակակշիռին տակ»:

Պարտի մէջ, Ռուսիոյ դեսպանը լրագրողներուն յայտարարեց, թէ Լեւոնային

Դարաբաղի վերաբերեալ Ատրպէյճանի ներկայացուցած բանաձեւին դէմ քուէարկելու ԵՒԿ-ի որոշումը կապուած է այդ փաստաթուղթին հաւասարակշռուած չըլլալուն հետ:

Իսկ Պարտի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Ռոնաթան Հենրիք ըսաւ, որ ՄԱԿ-ի մէջ Դարաբաղի շուրջ քուէարկող որեւէ բանաձեւ ոչինչ կը լուծէ հակամարտութեան կարգաւորման հարցէն: Հենրիք դիտել տուած է, թէ ՄԱԿ-ի մօտ տասնեակաւոր բանաձեւեր կան, որոնք մինչեւ օրս լուծում չեն գտած:

Իր կարգին, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան ըսաւ. «Եթէ Ատրպէյճան իսկապէս հաւատայ, որ բանաձեւին բովանդակութիւնը ուղեցոյց պիտի դառնայ բանակցութիւններու համար, մենք որեւէ արդիւնքի պիտի չհասնինք: Բանաձեւին մէջ Ատրպէյճան կը խօսի տարածքային ամբողջականութեան մասին, այնտեղ կը բացակայ ազգերու ինքնորոշման իրաւունքի սկզբունքը», դիտել տուաւ Արդարեւ Օսկանեան:

ՀԱՄԱՐՊԵՐԿ. «ՊԵՏՔ Է ՋՆՋԵԼ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹԻՒՆԸ»

Երոպական Խորհուրդի Մարդու Իրաւունքներու յանձնակատար Թոմաս Համմարպերկ Հայաստան կատարած եւօրեայ այցելութենէն ետք յայտարարեց, թէ արտակարգ իրավիճակը պէտք է ջնջել եւ անկախ, անկողմնակալ ու թափանցիկ հետաքննութիւն բանալ բացայայտելու Մարտ 1-ին Երեւանի մէջ պատահած դէպքերուն իրողութիւնը: Ան նաեւ պահանջեց չեղեալ յայտարարել մամուլի եւ խօսքի

ազատութեան դէմ արգելքները: Սակայն, հակառակ միջազգային դէտեկտի քեղադրութիւններուն, Հայաստանի խորհրդարանը արտակարգ նիստի մը հրապարակելով քուէարկեց «ժողովներ, համարահաւաքներ, ցոյցեր կայացնելու մասին» օրէնք մը, որուն լոյսին տակ քաղաքացիները որեւէ պատճառաւ կրնան զորբերուն իրողութիւնը: Ան նաեւ պահանջեց չեղեալ յայտարարել մամուլի եւ խօսքի